Դեկտեմբերի 26-ին ԻՀԱ-ի Կապանի գրասենյակում իրականացված միջոցառման գնահատման թերթիկների վերլուծությունը:

Ինչպես և նախատեսված էր, ժամը 14:00-ին սկսվեց ««Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սպասվող փոփոխությունների և Իրավաբանների հայկական ասոցիացիայի Լոռու մարզային մասնաճյուղի 2019 թվականի գործունեության հաշվետվություն» թեմայով սեմինարը, որը վարում էր ԻՀԱ ՀԿ-ի Սյունիքի մարզային մասնաճյուղի պատասխանատու/իրավաբան՝ Վաչե Բաղդասարյանը:

Սեմինարին մասնակցում էին Սյունիքի մարզի թվով 12 ՔՀԿ-ները:

Սեմինարի վերջում մասնակիցներին խնդրեցինք լրացնել միջոցառման գնահատման թերթերը:

Միջոցառման գնահատման թերթի վերլուծությունից (որտեղ բարձր բալը 5-ն է) պարզվեց, որ.

- **Միջոցառման մեթոդը** - 5 բալային սանդղակով գնահատման տարբերակից գնահատելիս 8 մասնակից գնահատել են 5 բալ, 3 մասնակից՝ 4 բալ, 1 մասնակից 3 բալ: **Միջինում միջոցառման մեթոդը գնահատվել է 4.58 բալ:**
- **Նյութի ներկայացումը** - 5 բալային սանդղակով գնահատման տարբերակից գնահատելիս 10 մասնակից՝ գնահատել են 5 բալ, 1 մասնակից՝ 4 բալ, 1 մասնակից 3 բալ: **Միջինում նյութի ներկայացումը գնահատվել է 4.75 բալ:**
- **Դուք գոհ եք վարողից** - 5 բալային սանդղակով գնահատման տարբերակից գնահատելիս 10 մասնակից՝ գնահատել են 5 բալ, 1 մասնակից՝ 4 բալ, 1 մասնակից 3 բալ: **Միջինում վարողի աշխատանքը գնահատվել է 4.75 բալ:**
- **Միջոցառման անցկացման կազմակերպչական մասը** - 5 բալային սանդղակով գնահատման տարբերակից գնահատելիս 9 մասնակից գնահատել են 5 բալ, 2 մասնակից՝ 4 բալ, 1 մասնակից 3 բալ: **Միջինում միջոցառման անցկացման կազմակերպչական մասը գնահատվել է 4.66 բալ:**
- **10 մասնակից (83.3%) նշում է, որ սովորել է ինչ-որ բան, որը կարող է օգտագործել առօրյա աշխատանքում, 2-ը ոչինչ չեն նշել**
- **9 մասնակից (75%) գտնում է, որ հետագա պարզաբանման հարց այս թեմայի հետ կապված չունեն, 2-ը նշել են այո՝ կապված կամավորական աշխատանքի պայմանագրի, ինչպես նաև այն որ**

սույն նախագիծը նպատակ է հետապնդում ՀԿ-ի գաղափարը դարձնել ԱՁ կամ բիզնեսի այլ ձև, 1-ը ոչինչ չի նշել:

- 11 մասնակից (91.6%) նշում է, որ գոհ է միջոցառման անցկացման ձևաչափից, 1-ը նշել է ոչ:

Այսպիսով՝ միջոցառման որակը ընդհանուր առմամբ միջինում գնահատվել է 4.66 բալով:

Մասնակիցները հիմնականում որպես արժեքավոր նշում են տեղեկատվության ներկայացման մատչելիությունը և թափանցիկությունը, ««Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սպասվող փոփոխությունների ներկայացումը և մանրամասն իրազեկումը իրավական տեսանկյունից:

Մասնակիցների կարծիքով անօգուտ կամ անարդյունավետ նյութը օրակարգում չկա:

Մասնակիցները նշում են, որ շատ է կարևոր է նմանատիպ դասընթացները:

Մասնակիցները շնորհակալություն հայտնեցին նշելով, որ թեման հետաքրքիր էր ու օգտակար:

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի Սյունիքի մարզային մասնաճյուղի
պատասխանատու/իրավաբան՝ Վաչե Բաղդասարյան
26.12.20119